Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Հոկտեմբեր ամսվա առաջին կիրակին լուսավորված է Ուսուցչի օրվա խորհրդով: Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ուրախ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ու շնորհավորում բոլոր ուսուցիչներին:

Սիրելի ուսուցիչներ, Ձեզ է վիճակված առաջնորդելու կյանքի անդրանիկ քայլերը մեր մանուկների ու պատանիների, բանալու նրանց առջև իմացության դռները, նրանց կրծքի տակ կրթելով նաև ծնողանվեր ու մարդասեր սիրտ, հայրենապաշտ ու առաքինազարդ հոգի: Ձեր նվիրումով ու հավատավոր ընթացքով, Ձեր հոգածու ձեռքով սերմանված հունդերը բարի պտուղներ պիտի բերեն ազգային մեր կյանքի անդաստաններում:

Արդարև մեծ է Ուսուցչի առաքելությունը, և երանի նրան, ով մեծ կլինի այդ առաքելության մեջ:

Իջման Ս. Մեղանի առջև Հայրապետիս հայցն է, որ, բարեխոսությամբ հայոց մեծ Ուսուցչապետեր Ս. Սահակ Հայրապետի և Ս. Մաշտոց Վարդապետի, Բարձրյալն Աստված քաջառողջ ու քաջամիտ, եռանդով ու սիրով լեցուն պահպանի Ձեզ բոլորիդ՝ վասն հավատո զորացյալ, շինությամբ լեցուն հայոց գալիքի:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
5 հոկտեմբերի 2002 թ.